ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ՄԱԾՁԲ-25/111

ք.Երևան «11» «06» 2025թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բրիդջ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Զախոյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **"YEREVANBALLETFEST" «Երևանի բալետային միջազգային փառատոն» ծրագրի մշակութային միջոցառման կազմակերպման (իրականացման) ծառայությունների մատուցման պարտավորությունը** (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10** աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **399 057 100 (երեք հարյուր իննսունինը միլիոն հիսունյոթ հազար հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.1 Պայմանագրի գնի՝ 319245680 (երեք հարյուր տասնինը միլիոն երկու հարյուր քառասունհինգ հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

4. 2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչությունը**:

7.14 ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով, սույն պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիրը կնքելը ծագած հարաբերությունների նկատմամբ՝ 2025 թվականի մայիսի 22-ից:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան	«Բրիդջ» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտի փ. 1	ՀՀ, ք. Երևան, Արաբկիր 51 փողոց, շենք 9, բն. 36
ՀՀ ֆինանսների նախարարության	ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 2050922023451001
ՀՀ 900012410537	ՀՎՀՀ 00143175
ՀՎՀՀ 02593108	
Վ.Պապիկյան_____	Ն. Զախոյան_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«11» «06» 2025թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-25/111
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայությունների							
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Հ/Մ	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	79951110/183	Երևանի քաղաքապետարանի կարիքների համար, Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող «Երևանյան բալետային 3-րդ միջազգային փառատոն» մշակութային միջոցառման շրջանակներում (այսուհետ՝ Փառատոն) անհրաժեշտ է Փառատոնային ծրագրի և մասնակիցների կողմից առաջադրվող տեխնիկական պայմանների ապահովել և սպասարկել հետևյալ տեխնիկական միջոցները և աշխատանքները. 1. ՄԵՏԱՂԱԿԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱ • Մետաղական կոնստրուկցիայի համար նախատեսված ոտքեր-480 հատ • Մետաղական կոնստրուկցիայի համար նախատեսված ուղղահայաց հենակներ-1740 հատ • Մետաղական կոնստրուկցիայի համար նախատեսված հորիզոնական կապաններ 2.07մ-2800 հատ • Մետաղական կոնստրուկցիայի համար նախատեսված հորիզոնական կապաններ 1.035մ-400 հատ • Մետաղական կոնստրուկցիայի համար նախատեսված ուղղահայաց անկյունագծային կապաններ 2.07X2մ-2300 հատ • Մետաղական կոնստրուկցիայի համար նախատեսված հորիզոնական անկյունագծային կապաններ 2.07X2.07մ-170 հատ • Մետաղական կոնստրուկցիայի համար նախատեսված կամուրջներ ծանրոցների համար-80 հատ • Մետաղական կոնստրուկցիայի համար նախատեսված կամուրջներ ծածկը կրելու համար 2.07X0.5մ-150 հատ • Մետաղական կոնստրուկցիայի համար նախատեսված մեծ կամուրջներ ծածկը կրելու համար 4.14X0.5մ-20 հատ • Մետաղական կոնստրուկցիայի համար նախատեսված հեծաններ բեմահարթակի մոդուլները տեղադրելու համար-514 հատ • Մետաղական կոնստրուկցիայի համար նախատեսված մետաղական կապաններ-400 հատ • Մետաղական կոնստրուկցիայի համար նախատեսված մետաղական ճախարակների հենակներ-10 հատ • Բեմահարթակ-1248 քմ	դրամ	399 057 100	1	ք. Երևան	մինչև 2025 թվականի հունիսի 27-ը

		• Մետաղական կոնստրուկցիայի համար նախատեսված ծանրոցներ 1 տոննա-36 հատ • Աստիճաններ-8 հատ: 2. ԱԼՅՈՒՄԻՆԵ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐ • Ալյումինե կոնստրուկցիայի բարձրացնող մեխանիզմ իր ամրակներով, շարժիչ կախելու հարմարանքով-8 հատ • Ալյումինե կոնստրուկցիայի հորիզոնական հիմնական կրող կառուցվածքներ իրենց ամրակներով-132 հատ • Ալյումինե կոնստրուկցիայի կտուրը կրող հիմնական կառուցվածքներ իրենց ամրակներով-64 հատ • Ալյումինե կոնստրուկցիայի կրող ոտքեր իրենց ամրակներով-16 հատ • Ալյումինե կոնստրուկցիայի ծածկի տակ գտնվող երկրորդական հեծաններ շարժիչները կախելու համար իրենց ամրակներով-32 հատ • Ալյումինե կոնստրուկցիայի ծածկ-1 հատ • Ալյումինե կոնստրուկցիայից գծեր դեկորացիաները և լույսերը կախելու համար ըստ պահանջի-462 հատ • Էլեկտրական ամբարձիչներ դեկորացիաների, Էկրանների ձայնային համակարգի լույսեր կախելու համար-94 հատ: 3. ԼՈՒՍԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱ • Շարժական լուսատու սարք ընդհանուր լուսավորության և ֆոներ ստանալու համար Clay Paky K20-20 հատ • Շարժական լուսատու սարք ընդհանուր լուսավորության և ֆոներ ստանալու համար Fine Art 1519pixie-10 հատ • Շարժական լուսատու սարք ուղղորդված լուսատվության համար Fine 2000L BSW-26 հատ • Շարժական լուսատու սարք ուղղորդված լուսատվության համար ինչպես նաև դիմային լույսի համար Fine 2000LH-16 հատ • Շարժական լուսատու սարք ուղղորդված լուսատվության համար Fine 600L-36 հատ • Անշարժ լուսատու սարք բեմի ետնամասում և կողային հատվածներում լուսատվություն ապահովելու համար LED bar-48 հատ • Անշարժ լուսատու սարք բեմի դիմային հատվածում ֆոնային լույսի ապահովման համար COB տեսակի-36 հատ • Լույսային ազդանշանի բաշխիչ սարքեր-6 հատ • Լույսերի ղեկավարման վահանակ GRAND MA 2 FULL size-1 հատ • Հետևող լուսարձակներ 2500 վատ հզորությամբ-4 հատ • Լույսերի ղեկավարման վահանակի պրոցեսորներ NPU-2 հատ: 4. ԼԵԴ ԷԿՐԱՆՆԵՐ LED Էկրաններ նախատեսված դրսում աշխատելու համար, որոնք պետք է ծառայեն նկարահանումների հեռարձակման համար: Խտությունը՝ 3.9մմ, լուսատվության ինտենսիվությունը 6000 nit-160 հատ • Էկրանների կառավարման համակարգ-1 հատ: 5. ՁԱՅՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ • Բարձրախոսներ ընդհանուր տիրույթով աշխատող նախատեսված հանդիսատեսի համար Meyer sound LEO-24 հատ						

		• Բարձրախոսներ ցածր հաճախականությունների նախատեսված հանդիսատեսի համար-8 հատ • Բարձրախոսներ նախատեսված երաժշտախմբի համար-22 հատ • Բարձրախոսներ նախատեսված պարողների համար բեմի աջ և ձախ կողմերում տեղադրելու համար: Adamson systems P8-12 հատ • Բարձրախոսներ նախատեսված դիմահարդարման սենյակների համար FLA 12-12 հատ • Խոսափողներ նախատեսված երաժշտախմբի համար յուրաքանչյուրին անհատական ձայնադրմամբ DPA 4099-60 հատ • Խոսափողներ նախատեսված ընդհանուր հարվածային գործիքների համար Neumann KM 184-20 հատ • Խոսափողներ ընդհանուր ձայնադրման համար Shcoeps MK4-20 հատ • Ձայնի թվային ղեկավարման վահանակ Allen&Heath S5000-1 հատ • Ձայնի ղեկավարման թվային վահանակի հարակից սարքեր-2 լրակազմ • Հեռակառավարվող խոսափողներ հաղորդավարների համար Shure Axient-2 հատ 6. ՀԱՐԱԿԻՑ ՊԱՐԱԳԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ Փառատոնի նախապատրաստական, ինչպես նաև բուն փառատոնի իրականացման և հետփառատոնային տեխնիկական աշխատանքների ընթացքում, ս/թ մայիսի 22-ից անհրաժեշտ է ապահովել. • Արգելափակոցներ-100 հատ • Անվտանգության ծառայություն • Մաքրության ծառայություն • Բիո զուգարաններ-24 հատ • Վրաններ նախատեսված դերասանների և ելույթ ունեցողների համար, որից՝ 14 հատ 3x3մ, 8 հատ 4x4մ, 10 հատ 5X5մ /սեղանները և աթոռները ներառած / • Կավրալիններ նախատեսված վրանների հատակների և բեմահարթակը ծածկելու համար-1248քմ • Աթոռներ հանդիսատեսի համար բոլոր օրերի հաշվարկով-3000 հատ • Աթոռներ նվագախմբի համար բոլոր օրերի հաշվարկով-200 հատ • Բեմահարթակի արտաքին երեսպատում բանեռապատում երկողմանի սև բանեռով- 1830քմ/ անհրաժեշտ է իրականացնել նաև բեմահարթակի և երաժշտախմբի հարթակի ներքին երեսպատում սև կտորով իր համապատասխան նյութերով և աշխատանքով/ • Ապահովել վարագույրի շարժական մեխանիզմ՝ իր վարագույրով և շարժիչներով • Գորգերի ամրացման աշխատանքներ իրենց նյութերով-1248 քմ • Ապահովել դիմերներ և դրանց միացման աշխատանքները • Ապահովել ընդմիջումներ /Սուրճ թեյ, ջուր և քաղցրավենիքի տաղավար/-250 լրակազմ					

		• Գեներատոր 7 օր վառելիքի ծախսը ներառած 125 kwatt-1 հատ • Հոսանքի մալուխների համար նախատեսված ռետինե պաշտպանիչներ-100 հատ • Ջրի տարաներ 1տ կոնստրուկցիաների անվտանգության համար-36 հատ • Ապահովել Էներգետիկ ծառայություն ամբողջ օրերի համար • Բանվորական աշխատանքներ հյուրերի դեկորների համար 6 օր • Հանդերձարանների համար հոսանքի պարագաների անցկացում մոնտաժում 32 կետ • Հանդերձարանների պարագաների ապահովում Կախիչների, արդուկների,սեղանների, հայելիների և այլն 32 կետ • Քիմ մաքրման ծառայություն հյուրերի հագուստների համար 40 լրակազմ • Ըստ նկարահանման խմբի պահանջի՝ նկարահանման պարագաներ նախատեսված բեմադրողի օգնականների համար, տեսախցիկներ, մոնիտորներ, կառավարման բլոկներ • Ներքին օպերատիվ կապի համակարգի ապահովում • Տպագրական ծառայություն բեյջեր- 800 հատ • Տպագրական ծառայություններ-բեմահարթակի հետնամասում հանդերձարանների նշումների տպագրություն ցուցանակների տպագրություն և փակցնում • Պարագաներ հանդիսատեսի և մասնակից խմբերի համար, այդ թվում՝ պայուսակներ, երկկողմանի տպագրությամբ, գրպանով, սիլիկոնային տարբերանշանով-8000 հատ • ծածկոց 120*180 չափի,տպագրությամբ-8000 հատ • շապիկ, տպագրությամբ և սիլիկոնե տարբերանշանով-800 հատ • ժիլետ, տպագրությամբ և սիլիկոնե տարբերանշանով-500 հատ • Անհրաժեշտ է ապահովել հանդիսավարի ծառայություն ամբողջ օրերի հաշվարկով • Ամբարձիչներ տարբեր տեսակների (կառ, կրան, վիշկա) կառուցման և քանդման օրերի քանակով 10 օր). Տեխնիկական միջոցները շահագործելու նպատակով ապահովել համապատասխան ձայնային, լուսային սարքավորումները սպասարկող ռեժիսորներ, լեդ էկրանը շահագործող մասնագետ, որոնց թեկնածությունը անհրաժեշտ է ներկայացնել պատվիրատուի հաստատմանը: Լեդ էկրանին հեռարձակելու նպատակով անհրաժեշտ է պատրաստել լեդ կոնտենտ, գլխադիր Երևանի քաղաքապետարանի լոգոյով: Անհրաժեշտ է ապահովել համարժեք ու անվտանգ կոմուտացիա: Համերգի և փորձերի ընթացքում անհրաժեշտ է ապահովել մասնակիցների և հանդիսատեսի համար նշված բոլոր հարթակների անվտանգ և ապահով գործունեությունը՝ գործող իրավակարգավորումներին և սահմանված անվտանգության նորմերին համապատասխան:					

		Ապամոնտաժումը անհրաժեշտ է իրականացնել մինչև 27.06.2025թ.:					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900012410537
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Բրիդջ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Արաբկիր 51 փողոց, շենք 9, բն. 36
ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 2050922023451001
ՀՎՀՀ 00143175

Ն. Զախոյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«11» 06 2025թ. կնքված
ԵՔ-ՄԱԾՁԲ-25/111 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայությունների															
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79951110/183	"YEREVANBALLETFEST" «Երևանի բալետային միջազգային փառատոն» ծրագրի մշակութային միջոցառման կազմակերպման (իրականացման) ծառայություններ /տեխնիկական ապահովում/	0	0	0	0	0	399057100	399057100	399057100	399057100	399057100	399057100	399057100	399057100

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
ՀՀ 900012410537
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Բրիդջ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Արաբկիր 51 փողոց, շենք 9, բն. 36
ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 2050922023451001
ՀՎՀՀ 00143175

Ն. Զախոյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
« » « » 2025թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-25/111
ծածկագրով գնման պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2025 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » « » 2025թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-25/111
ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց **Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____ _____
ազգանուն, անուն ազգանուն, անուն

_____ _____
ստորագրություն ստորագրություն

Հավելված N 4
« » « » 2025թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-25/111
ծածկագրով գնման պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.